ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Կոտայքկոշ ԲԲԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
26	Կոտայքկոշ	Կոստյում կիսաբրդյա	-	Կոտայքկոշ ԲԲԸ	Բաճկոնը մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/, առնվազն 67% բուրդ, առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1մ2 314գ, աստառը՝ մուգ փիրուզագույն << POLICE >> գրառումով և ՀՀ Ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գ մ2, ±3%: Բաղկացած է կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է առաջամասի կենտրոնում տեղադրված պլաստմասե շղթայով, մեկ առանձին կտորից գոտեմասով, գոտու կողքային մասերը ունի 12-18 սմ

					երկարությամբ առաձգական ժապավեն: Բաճկոնի թևքերը բաղկացած են 2 կտորից, թեզանիքը թևքին միացված է կարմիր եզրաքուղով, թեզանիքը կոճկվում է 2 մետաղյա արծաթագույն ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, 14մմ ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված շղթայով փակվող գրպաններ: Կրծքամասում հորիզոնական՝ շղթայով փակվող ներկարված գրպաններ, կարմիր եզրաքուղերով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից, որոնք միացված են կարմիր եզրաքուղով: Բաճկոնի օձիքը հետ ծալվող, մշակվում է 1 կտորից: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան՝ բաղկացած է 2 մասից, գունավոր

					գործվածքե կտորից, կողային մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Ուսադիրները կարվում են սև կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Տաբատը – Մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/ առնվազն 67% բուրդ, առավելագույնը 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գ, ±3%: Աստառը մուգ փիրուզագույն << POLICE >> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը առնվազն 70գր մ2: Ուղիղ ուրվագծով, կողագծերը 1.5-2մմ լայնությամբ կարմիր գույնի կտորից եզրաքուղով: Գոտին՝ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան:Առաջամասում մինչև

					ծնկները մշակվում է աստառ: Բաճկոնի վրա պետք է կախած լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերի չափսերը պետք է համապատասխանեն ապրանքատեսակի չափսերին: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը՝ 52, 54 և այլն

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ОАО Котайккош в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2024ՀԴՁ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	технические характеристики
26					